ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Թիվ -113-

01.12..2017թ.

ՀՀ Լոռու մարզպետ
պ-ն՝ Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան
Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքի ավագանու թիվ 18 , 19 և 20-Ն որոշումները:

Առդիր՝ 4 թերթ :

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» Նոյեմբերի 2017 թվականի N 18

## ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ՈՒԱԶ ՊԱՏՐԻՈՏ» ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Անշարժ գույքի գնահատող Ա/Ձ Արմեն Ամիրբեկյանի հաշվետվությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Գոգարան համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Գոգարանի համայնքային սեփականություն հանդիսացող 2006 թ. արտադրության «ՈՒԱԶ ՊԱՏՐԻՈՏ» մակնիշի ավտոմեքենան աճուրդով օտարելուն:
2. Աճուրդ-վաճառքի մեկնարկային գինը սահմանել 1 830 000 / մեկ միլիոն ութ հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԳԱԼՈՅԱՆ ԳԱՐԻԿ | | | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ | | | |
| ՀԱԼԱՋՅԱՆ ԵՂԻՇԵ | | | |
| ՄԱՐՈՒՔՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՆԻ | | | |

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գոգարան համայնք, հասցե գ Գոգարան,
հեռ.0255 6 06 04 էլ. փոստ՝ gogaran.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 27 » Նոյեմբերի 2017 թվական, 19 –Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 31 -ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գոգարան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 08-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Գոգարան համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| ԳԱԼՈՅԱՆ ԳԱՐԻԿ | | | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ | [signature] | | |
| ՀԱԼԱՋՅԱՆ ԵՂԻՇԵ | [signature] | | |
| ՄԱՐՈՒՔՅԱՆ ԿԱՐԵՆ | [signature] | | |
| ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՆԻ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] ԱՐԹՈՒՐ ԳԱԼՈՅԱՆ
Կ.Տ (ստորագրություն) (Անուն, ազգանուն)

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքի ավագանու
2017 թվականի նոյեմբերի 27- ի N 19-Ա որոշման

## ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈԳԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Մատինյան Արմինե Հովիկի - 50.0 հազար դրամ, /ուսման վարձ /
2. Գևորգյան Հերմինե Վարազդատի – 20.0 հազար դրամ , / նորած. երեխայի գումար /
3. Ջանազյան Աննա Արտակի – 10.0 հազար դրամ , / նորած. երեխայի գումար /

Գոգարան համայնքի ղեկավար ______________ (ստորագրություն ) Արթուր Գալոյան (անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գոգարան համայնք, հասցե 1-ին փողոց 31/1,
Հեռախոս՝ 0255-6-06-04
Էլ.Փոստ՝ gogaran.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

« 27 » Նոյեմբերի 2017 թվականի N 20-Ն

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի «ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 03-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով , « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով , « Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և 70-րդ հոդվածի 6-րդ մասով ՝

Գոգարան համայնքի ավագանին որոշում է.

1.Գոգարան համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 25-ի « Գոգարան համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին » թիվ 03-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հավելվածների :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը :

3.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար :

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԳԱԼՈՅԱՆ ԳԱՐԻԿ | | | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ | | | |
| ՀԱԼԱՋՅԱՆ ԵՂԻՇԵ | | | |
| ՄԱՐՈՒՔՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՆԻ | | | |

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ ԱՐԹՈՒՐ ԳԱԼՈՅԱՆ
(ստորագրություն ) (Անուն,ազգանուն )

Կ.Տ